

ՂԱՐԱՐԱՂԻ ՏԱԳՆԱՊԸ ԻՐ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ ԶԷ ԳՏԱԾ ՏԱԿԱԻՆ, Կ'ԸՍԵՆ ՄԻԽԱՅԻԼ ԿՈՐՊՈՂՁՈՎ ԵՒ ԱՆՏՐԷ ԿՐՈՍԻՔՕ

Շարաթ, 23 Յուլիսին, օտար լրատու գործակալութիւններ եւ հայրենի պաշտօնական պարբերներ հաղորդել էին թէ անուանի գրագէտ եւ լրագրող Զորի Բարաթեան Ստեփանակերտ մեկնած է պատուիրակութեամբ մը, տեղւոյն հայերուն պար-

զելու համար Ղարարաղի Մարզի Հայաստանի կցման հարցին վերջին զարգացումները եւ այդ առնչութեամբ ձեռք ձգուած արդիւնքները: Օր մը ետք իմացուցաւ թէ գրագէտին ընկերակցած է նաեւ բանաստեղծուհի Սիրիա Կապուտիկեան նոյն նպատակով: Երկուքով միասին անոնք կրցած են համոզել Ղարարաղի հայերը թէ Գերագոյն Սովետի նախագահութեան Յուլիս 18ի նիստին իրենք կարեւոր դիմումներ ձեռք ձգած են իրենց պահանջատիրութեան հարցով, որով անիմաստ է այլեւս շարունակել գործադուլն ու բողոքի ցույցերը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

1) Լիբանանայ ազգային երեք կուսակցութիւնները բուն կերպով կը բողոքեն հորի. Միութեան Գերագոյն խորհուրդին 18 Յուլիսի անարդար վճիռին դէմ, որով մերժուցաւ Ղարարաղի (պատմական Արցախ) եւ հորի. Հայաստանի ժողովուրդներուն արդար պահանջը՝ բացարձակ մեծամասնութեամբ տակաւին հայաբնակ մնացած Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզը եւ Ատրպէյճանի իշխանութեան անջատելով եւ Հայաստանի պետականութեան ենթարկելու մասին:

Բաւարարուելով երկու մտաւորականներու բացատրութիւններէն, Ստեփանակերտի հայերը որոշած են վերջ տալ գործադուլին երկուշաբթի, 25 Յուլիսին սկսեալ եւ լծուիլ կանոնաւոր աշխատանքի:

Որոշ նկատումներու եւ շահերու վրայ հիմնուած այս անարդար վճիռը դառն յուսախարութիւն պատճառեց ոչ միայն հայրենաբնակ եւ հ. Միութեան սահմաններուն մէջ ապրող մեր ժողովուրդին, այլեւ ամբողջ ափիւսահայութեան, որոնք հաւատով եւ յայտով վստահած էին որ հ. Միութեան նոր դեկլարութիւնը այս առիթը պիտի օգտագործէր սրբագրելու համար հայ ժողովուրդին պարտադրուած պատմական մեծ անարգարութիւններէն մէկը: Անընդունելի այդ որոշումը ոչ միայն ժխտումն է հայ ժողովուրդի արդար իրաւունքներուն եւ պատմական իրականութեան, այլ նաեւ կը հակասէ հ. Միութեան մէջ երեւան եկած վերակառուցումի եւ հրապարակայնութեան ժողովրդավար նոր բաղաձայնութեան: Անհանդուրժելի կը գտնենք նաեւ Գերագոյն խորհուրդին կողմէ առնուած որոշումին ձեւն ու գայն հազարդելու եղանակը. (Ազգային արժանապատուութեան վիրաւորանք, սպառնալիք, միակողմանի եւ անհիշող լրատուութիւն, եւ այլն) հայկական արդար պահանջին դէմ օրինական արգելի նկատուող խորի. սահմանադրութիւնը, ըստ խորհրդային իսկ ազգիւրներու, կը պարունակէ սխալներ եւ հակասութիւններ, որոնք շուտով պէտք է սրբագրուին, եւ հետեւաբար, այդ վճիռը չի կրնար օրինական ու վերջնական նկատուիլ:

Ղարարաղի գլխաւոր քաղաքի հայերուն գործադուլին վերջ դնելու որոշումը սխալ մեկնաբանուցաւ օտար լրատու գործակալութեանց կողմէ, որոնք դիտաւորեալ շարափոխութեամբ մը հայերու որոշումը վերագրեցին սպառնալիքներու: Բոլոր լրատու գործակալութիւնները երկուշաբթի կէսօրէն սկսեալ հաղորդեցին թէ Ստեփանակերտի մէջ գործադուլը վերջ գտած է եւ ամէն ոք վերսկսած աշխատանքի:

2) Գերագոյն խորհուրդին առած անկաստ այս որոշումը մեզ կը մզէ խորհելու, քէ մեր պատմական իրաւունքները մարդկութեան նանչցնելու համար կատարուած աշխատանքները անբաւարար են, եւ հետեւաբար, նոր մօտեցումով եւ աշխատանքի տարբեր ձեւերով անհրաժեշտ է բազմապատկել ու համակարգել նիգեքը՝ միշտ մնալով օրինականութեան սահմաններուն մէջ: Ղարարաղի պահանջը իբրեւ ներքին հարց, առաւելաբար կը վերաբերի տեղաբնակ եւ հ. Միութեան սահմաններուն մէջ ապրող մեր հայրենակիցներուն, որոնց աւագ պարտականութիւնն է գայն աւելի լայն տարողութեամբ ծանօթացնելու եւ այդ հարցին պաշտպաններուն թիւը շատցնելու գործը: Երկարաշունչ աշխատանք մը, որուն իր անվերապահ աջակցութիւնը կը բերէ նաեւ սփիւռքը:

Ղարարաղի Համայնավար կուսակցութեան պատասխանատու մը օտար լրագրողի մը Մոսկուայէն իրեն ուղղած մէկ հարցումին պատասխանած է զիջումներու առնչութեամբ թէ Գերագոյն Սովետի նախագահութեան որոշումով՝ հաւանաբար մինչեւ մէկ ամիս Ստեփանակերտ ժամանէ կարեւոր պատուիրակութիւն մը, հսկելու համար տեղւոյն տնտեսական եւ ընկերային նոր ծրագիրներու իրագործման աշխատանքներուն միայն: Պատուիրակութեան մաս պիտի կազմեն հ. Միութեան Համայնավար կուսակցութեան կեդրոնական կոմիտէի անդամներ, խորհրդային կեդրոնական կառավարութեան եւ Հայաստանի եւ Ատրպէյճանի հանրապետութիւններու ներկայացուցիչներ: Այս պատուիրակութեան կազմութիւնը թելադրուած է գլխաւոր դեկլարար Կորպաչովի կողմէ, որուն մէջ մարդային պատասխանատուն կը տեսնէ ԼՂԻՄի ամբողջական ինքնավարութեան եթէ ոչ տէ փաթեթ, քանի տէ ժիւրէ երաշխաւորուածը:

3) Շատ բնականաբար, վերոյիշեալ այդ անարդար որոշումը մեծ յուսախարութիւն, հիասթափում եւ ընդվզում լուսազացուց հայ զանգուածներուն մօտ՝ գգացականութեան վրէժնաւելում սխալ փայլեր ալ առնելու վտանգին առջեւ դնելով մեր ժողովուրդը: Պէտք է ի մտի ունենալ որ մեր իրաւունքներու վերահաստատումի նամբուն վրայ այս մերժումը հարցին ձայնը դուրսէն չենք նկատեր, այս առթիւ մեր ժողովուրդին ձեռք գտած փորձառութիւնը բանկարծէք համարելով յառաջիկայ հանգրուաններու համար: Կանգրադառնալով քէ մասնաւորաբար դժնդակ է զարաբաղաբնակ մեր ժողովուրդի վիճակը, եւ աւելցնելով պատմական փորձառութիւնը մեզի կը յուշէ, քէ պէտք է կաշառած մնալ հայրենի հողին, երբէ կ'ուզենք օրինաւոր տէրը ըլլալ անոր:

Մարդային նոյն պատասխանատուն օտար լրագրողին յայտնած է թէ Ղարարաղի տնտեսական պատասխանատուներու նկատմամբ դատական հետապնդումի կամ պատժամիջոցներու դիմելու սպառնալիքները շատ ալ լուրջի առնուելիք կէտեր չեն: Այս սպառնալիքները ուղղուած էին Ուրբաթ օր Մոսկուայի ընդհ. դատախազութեան մէկ անդամին կողմէ:

Անարդար կարգադրութիւնները չեն կրնար վերջնական ըլլալ եւ արդարութիւնը ուշ կամ կանուխ կը յարբանակէ: Համարուած ենք որ խորհրդային իշխանութիւնները վերստեղծութեան ենթարկելով առնուած սխալ որոշումը՝ արդարութիւնը պիտի վերահաստատեն, այդ ձեւով օժանդակելով նաեւ ժողովուրդներու միջեւ իսկական բարեկամութեան, եղբայրութեան եւ աշխարհի խաղաղութեան հաստատման:

Շարաթ օրուան իր համարին մէջ, Հայաստանի «Կոմունիստ» թերթը անդրադարձած է Գերագոյն Սովետի նախագահութեան որոշումին հայերու ի նպաստ դրական կէտերուն, եւ մէջբերած է գլխաւոր դեկլարար Միխայիլ Կորպաչովի ձեռքին մէկ նախադասութիւնը, որուն մէջ ըսուած է թէ «ոչ մէկ հարց կարելի է ամբողջութեամբ փակուած համարել»: Այս միտքը կը հաստատէ նաեւ Գերագոյն Սովետի նախագահութեան մէկ արտուածը, որ կը նախատեսէ յանձնախումբի մը կազմութիւնը ԼՂԻՄի հարցին շուրջ եւ առաջարկներ բանաձեւելու եւ զանոնք ներկայացնելու նախագահութեան:

Ս. Դ. Հ. Կ. ԼԻԲԱՆԱՆԻ ՎԱՐՁ ՄԱՐՄԻՆ
Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ
Ռ. Ա. Կ. ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋ. ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Յուլիս 18ի նիստի փակման իր խօսքին մէջ նոյն միտքը արտայայտած է նաեւ Գերագոյն Սովետի նախագահութեան նախագահ Անտրէյ Կրոմիքո, որ ըսած է «լուծումներու փնտառուքը ոչ թէ սպառած է, այլ իրականին մէջ նոր է որ կը սկսի»:

Ատրպէյճանի Համայնավար կուսակցութեան ընդհանուր քարտուղար Ապտուլ Ռահման վեղիրով յայտարարեց թէ կողմնակառն հանրապետութիւններու մտաւորականներուն միջեւ համաձայնութիւն մը գոյացած է միասնաբար հանդիպում մը ունենալու: Այս հանդիպումին, ըսած է վեղիրով «Ղարարաղի տաղնապը, որ կը շարունակուի 6 ամիսէ ի վեր, պէտք է որ արժարժուի եւ լուծում մը գտնէ»:

Համաձայն հայկական աղբիւրներու, սովետ բանակայիններ, որոնք երկու ամիսէ ի վեր կը գտնուէին Պաքու՝ պաշտպանելու համար հայկական թաղերը, հեռացած են մայրաքաղաքէն:

Խորհրդային Միութեան Համայնավար կուսակցութեան կեդրոնական կոմիտէն իր կողմէ որպէս ներկայացուցիչ նշանակեց Արքատի Վոլպէրն՝ Ղարարաղ մեկնելու եւ տեղւոյն վրայ հսկելու տնտեսական եւ ընկերային մարզերու զարգացման աշխատանքներուն:

Կիրակի օր Մոսկուայի հայոց դերեկամատան մէջ հայեր զարձեւալ հաւաքուած են Հայաստանի եւ Ղարարաղի կացութեան շուրջ խորհրդածելու: Անոնք պարզած են սպիտակ պատասխաններ, ցոյց տալու համար թէ իրենց պահանջին պատասխան չէ տրուած: Բաղաբաղապետութիւնը յայտնած է հայերուն թէ յետայսու դերեկամատան մէջ հաւաքոյթները արգելուած են: Հայերը ցրուած են առանց միջնակցի: